նայում հայ-կաթուղիկէի եւ հայ-բողոքականի վրայ, ինչպէս եւ վերջիններս առաջնի եւ միմեանց վրայ։

Բայց ո՞վ է Ղարադաղցին եւ Ղարաբաղցին. ո՞վ է հայ-լուսաւորչականը եւ հայ-կաթուղիկեայն, հայ-բողոքականը. միթէ ամէնքն եւս մի եւ նոյն ցեղից չէ՞ն, մի եւ նոյն ազգի զաւակներ չէ՞ն. միթէ ամէնքն եւս իրանց քրիստոնէութիւնը չընդունեցի՞ն Գրիգոր Լուսաւորչուց. միթէ ամէնքն եւս մի եւ նոյն լեզուով չէ՞ն խօսում. միթէ նրանք մի եւ նոյն պատմութիւնը չունի՞ն։

Անշուշտ, այդպիսի մի խորթութիւն, այդպիսի մի վնասակար բաժանում տեղի է ունենում միշտ անկիրթ ժողովուրդների մէջ։ Եթէ մի հասարակութիւն կամ ժողովուրդ անհատական կեանք է վարում, եթէ նա չէ հետաքրքրքրում միւս հասարակութիւնների կեանքով, եթէ նա իր ոյժը, բարօրութիւնն ընկերական կեանքի մէջ չէ տեսնում, կը նշանակէ թէ նա դեռ լուսաւորութեան ստոր աստիճանի վրայ է կանգնած։ Հայերի մէջ չկայ բարոյական միութիւն, բարոյական համերաշխութիւն, որը միակ գրաւականն է ազգի զարգացման. հետեւաբար, մի տեղի Հայի ստացած անարգանքն եւ անպատուութիւնը՝ միւս տեղի Հային չէ դիպչում, չէ վշտացնում, այդ կողմից մենք Հրեաներից անգամ յետ ենք մնացել։ Մի քանի տարի առաջ Քութայիսում մի Հրեայ ամբաստանուեց, թէ նա իբր թէ արիւնաքամ է արել մի քրիստոնեայ